ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
գ.Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N-1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հուլիսի 2018թ. N83-Ա

ԵՎԱ ԳՐԻԳՈՐԻ ԶՈՐՈԳԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Եվա Գրիգորի Զորոգլյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշմամբ սահմանված լիազորությունների իրականացումը:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2018 թվականի հունիսի 26-ի թիվ 82-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համայնքի ղեկավար Վ.Վենիամինով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
գ.Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N-1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04 » հուլիսի 2018թ. N84

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ԹԻՎ 77 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջների

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

Համայնքի ղեկավարի 2018 թվականի հունիսի 15-ի « Համայնքի ղեկավարի 2018 թվականի մայիսի 21-ի թիվ 63 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 77 որոշման նախաբանից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:

Համայնքի ղեկավար Վ.Վենիամինով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
գ.Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N-1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04 » հուլիսի 2018թ. N85

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԹԻՎ 78 ԵՎ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ԹԻՎ 79 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջների

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

Համայնքի ղեկավարի 2018 թվականի հունիսի 20-ի «Համայնքի առևտրի հասարակական սննդի սպասարկման օբյեկտերում հսկողություն իրականացնելու մասին» N 78 և հունիսի 21-ի «Ֆինանսական աջակցություն տրամադրելուլու մասին» N79 որոշումների նախաբաններից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:

Համայնքի ղեկավար Վ.Վենիամինով